



ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԴԱՍ 7



ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

«Չեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության
ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ
Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի
և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և
իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության
կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ
գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների
տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները,
որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության
տեսակետների հետ:




ԴԱՍ 7

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՒ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՒ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ
ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՈՒՅԹՈՒՄ


ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով
ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն
այս ձեռնարկում:



ՄՈՏԻՎԱԶՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ
ուսումնասիրելու համար անհրաժեշտ է
մոտ 5 րոպե:

Ուշադրությամբ
կարդացեք դասի
տեսական մասը՝
օգտվելով բառարանից,
և այն յուրացնելուց հետո
միայն պատասխանեք
ինքնաստուգիչ
հարցերին:
Այս աշխատանքների
համար անհրաժեշտ է
մոտ 205 րոպե:

Ծանոթացեք
տարածաշրջանային
կարգավորումներին:

Սեռով պայմանավորված և ընտանիքում բռնության գոհերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առնչությամբ ծագող հիմնական դատավարական խնդիրները հանգում են վերջիններիս դատավարական առանձին իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ ապահովելու անհրաժեշտությանը: Սակայն խնդիրն առավել բարդանում է, երբ անհրաժեշտություն է առաջանում հավասարակշռելու մի կողմից՝ տուժողի, մյուս կողմից՝ ենթադրյալ հանցանք կատարած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը՝ դրանք համադրելով հանցավորության դեմ արդյունավետ պայքարի շահին՝ ի վերջո լուծելու համար հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռություն ապահովելու գերխնդիրը:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՍ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԻՐԱՎՈՒՆԹՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՅՔԱՐԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՄԵԿԱՆԻԶՄՆԵՐԸ

ԴԱՍ 1

ԴԱՍ 2

ԴԱՍ 3

ԴԱՍ 4

ԴԱՍ 5

ԴԱՍ 6

ԴԱՍ 7

ԴԱՍ 8

ԴԱՍ 9

ԴԱՍ 10

«Մասնակից պերսոնները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ տուժողների իրավունքները և շահերը նախաքննական և դատական վարույթի բոլոր փուլերում պաշտպանելու նպատակով, ներառյալ՝ նրանց որպես վկաների ունեցած հարուկ կարիքները, մասնավորապես՝

ա. տուժողներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին և վկաներին՝ պաշտպանելով ճնշումներից, վրեժխնդրությունից և կրկնակի զոհականացումից.

բ. ապահովելով, որպեսզի տուժողները տեղեկացվեն կատարողին ժամանակավորապես կամ վերջնականապես ազատ արձակելու կամ վերջինիս փախուստի մասին՝ առնվազն այն դեպքերում, երբ տուժողի կամ նրա ընտանիքի անդամներին կարող է սպառնալ վտանգ.

գ. տեղեկացնելով նրանց, ներքին օրենսդրությամբ սահմանված պայմաններում, իրենց ունեցած իրավունքների և իրենց տրամադրության տակ եղած ծառայությունների, իրենց բողոքների քննության ընթացքի, հարուցված մեղադրանքների, ընդհանրապես նախաքննական կամ դատական վարույթի ընթացքի, իրենց ունեցած դատավարական դերի, ինչպես նաև իրենց գործի ելքի մասին.

դ. հնարավորություն տալով տուժողներին, ներպետական քրեադատավարական օրենքով սահմանված կարգով, արտահայտելու իրենց տեսակետը և ներկայացնելու ապացույցներ և ապահովելով նրանց տեսակետները, կարիքները և մտահոգություններն անձամբ կամ միջնորդ անձի միջոցով քննարկման առարկա դարձնելու հնարավորությունը.

ե. տուժողներին աջակցության համապատասխան ծառայություններ տրամադրելով՝ այն հաշվով, որպեսզի նրանց իրավունքներն ու շահերը ներկայացվեն և հաշվի առնվեն պարզաճ կերպով.

զ. ապահովելով տուժողի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը կամ տուժողի նկարագիրը պաշտպանելուն ուղղված միջոցներ նախապեսելու հնարավորությունը.

է. ապահովելով, հնարավորության դեպքում, նախաքննության մարմնի գրնվելու վայրում կամ դատարանում տուժողների և կատարողների միջև շփումների բացառումը.

ը. ապահովելով անկախ և ձեռնահաս թարգմանիչներ՝ թե այն դեպքերում, երբ փուժողը հանդիսանում է դափնավարության կողմ, և թե այն դեպքերում, երբ նա փախի է ցուցմունքներ.

թ. փուժողների փախույթ, ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով, առանց դափնական նիստին ներկայանալու կամ առնվազն դափնական նիստից ենթադրյալ կարարողի բացակայության պայմաններում, ցուցմունք փախու հնարավորություն, մասնավորապես՝ հնարավորության դեպքում, հաղորդակցման համապարաստիան փեխնությունների օգտագործմամբ»:

Մինչ հաջորդ պարբերության հետ ծանոթանալը, մտաբերեք, թե երկրորդային գոհականացման ինչպիսի դեպքերի հետ եք դուք առնչվել կամ ականատես եղել:

Քննարկվող հարցի առնչությամբ թերևս կարիք կա անդրադառնալու տեսության մեջ և գործնականում հաճախ քննարկվող՝ երկրորդային գոհականացումից խուսափելու համար օրենսդրական և գործնական հիմքերի ձևավորումն է:

Իբրև երկրորդային գոհականացման օրինակներ՝ նշվում են հետևյալ դեպքերը.

- 1 ոստիկանության կամ քրեական արդարադատության համակարգի աշխատակիցների ոչ պատճառ վարքագիծը,
- 2 քրեական վարույթի ողջ ընթացքին՝ սկսած մինչդատական վարույթից մինչև դատական վարույթ պարտադիր անմիջական մասնակցության առկայությունը,
- 3 տուժողի՝ իր իրավունքները ենթադրյալ հանցանք կատարած անձի իրավունքների հետ հավասարակշռելու հարցում խնդիրները,
- 4 քրեադատավարական ընթացակարգերի համատեքստում տուժողի դիրքորոշման անտեսումը,

- 5 շտապօգնության սենյակների լարված գրաֆիկը կարող է ազդել սեռական բռնության ենթարկվածի անձնական անձեռնմխելիության և արժապատվության զգացումի վրա,
- 6 դպրոցում ուսուցչական կազմի կողմից երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի նշաններն անտեսելը,
- 7 բժշկական անձնակազմի կողմից ամուսնու կողմից բռնության հետքերի անտեսումը,
- 8 տուժողին հաշտվելուն կամ ներելուն հարկադրելը, երբ վերջինս դեռ պատրաստ չէ դրան կամ դա իրականացվում է նրա կամքին հակառակ,
- 9 լրատվության միջոցների կողմից ոչ պատշաճ լուսանկարումը, հետապնդումը, տեսանկարահանումը և այլն (1):

Այս առնչությամբ, մասնավորապես, տեսության մեջ նշվում է երեխաների սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններով կրկնակի դատավարական նույնաբովանդակ գործողությունները, օրինակ, հարցաքննությունները սահմանափակելու անհրաժեշտությունը: Դա բխում է նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի պահանջներից («Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» 2007թ.-ի հոկտեմբերի 25-ի ԵԽ-ի կոնվենցիա, Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշներ, Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշներ և այլն):

Այսպես, Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների (Բանաձև 2005/20) 31-րդ կետի համաձայն՝ մասնագետները պետք է նաև իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք.

Ծանոթացեք երկրորդային գոհականացումը նվազեցնող միջոցառումների հետ:

- 1 կնվազեցնեն հարցաքննությունների թիվը: Պետք է սահմանել տուժող և վկա երեխաներից ցուցմունք ստանալու հատուկ

ընթացակարգեր՝ հարցաքննությունների, ցուցմունքների, լսումների, և հատկապես՝ արդարադատության գործընթացի հետ անհարկի շփումների թիվը նվազեցնելու նպատակով, այդ թվում՝ տեսաձայնագրման կիրառմամբ.

- 2 եթե դա նախատեսված է տվյալ իրավական համակարգով, կապահովեն տուժող և վկա երեխաների պաշտպանությունը հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի կողմից հարցաքննվելուց՝ միաժամանակ հարգելով երեխայի պաշտպանության իրավունքը: Անհրաժեշտության դեպքում տուժող և վկա երեխաները պետք է հարցաքննվեն (այդ թվում՝ դատարանում) հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի տեսադաշտից դուրս պայմաններում, պետք է նաև տրամադրվեն առանձին դատական սպասարահներ և մեկուսի հարցաքննության տարածքներ.
- 3 կապահովեն, որ տուժող և վկա երեխաները հարցաքննվեն երեխայի հանդեպ զգայուն եղանակով՝ դատավորների կողմից հսկողության հնարավորությամբ, նպաստելով ցուցմունքներ տալու գործընթացին և կրճատելով ահաբեկման հնարավորությունը, օրինակ՝ ցուցմունք տալիս օգնելու կամ հոգեբան փորձագետներ նշանակելու միջոցով (2):

Ձեր կարծիքով՝
Հայաստանի
Հանրապետությունում
քննիչների կողմից
կիրառվում են նման
մանրակրկտորեն
պլանավորված
առանձին քննչական
գործողություններ:

Որպես երկրորդային գոհականացման կանխման միջոց տեսության մեջ հատկապես կարևորվում է քննիչի կողմից առանձին քննչական գործողությունների, մասնավորապես, հարցաքննության նախապատրաստությունն այն համատեքստում, որ անհրաժեշտ է կատարել սենյակի ընտրությունը, հարցաքննության համար անհրաժեշտ միջավայրի ձևավորում, նախքան հարցաքննությունը երեխային, նրա ընտանիքի, գործի հանգամանքների մասին անհրաժեշտ տեղեկությունների հավաքումը, հոգեբանի և մանկավարժի ներգրավումը (3):

Իհարկե, կոնկրետ կատեգորիայի տուժողների մասնակցությամբ քննչական և այլ դատավարական գործողություններ իրականացնելիս պետք է իբրև ուղենիշ ունենալ վերջիններիս առանձնահատուկ խոցելի կարգավիճակը: Այս առնչությամբ թերևս առաջին պլան է մղվում ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության ապահովման դատավարական պահանջը, մասնավորապես, օրենսդրական արգելքն անձին ներգրավել երկարաժամկետ կամ ֆիզիկական տանջանքներ պատճառող, նրա կամ շրջապատողների առողջության համար վտանգ ներկայացնող քննչական փորձարարությունների, դատավարական այլ գործողություններ կատարելուն (ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 8-րդ մաս): Եվ չնայած տուժողի դատավարական պարտականություններից է վարույթն իրականացնող մարմնի իրավաչափ կարգադրություններին ենթարկվելը (ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մաս), սակայն պետք է ի նկատի ունենալ, որ, օրինակ, քննման ենթարկվելու պահանջը կարող է սեռական բռնության գոհին լրացուցիչ հոգեկան տառապանքներ պատճառել:

Երկրորդային գոհականացման կանխման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի պատշաճ իրավաբանական օգնության ապահովումը: Այսպես, օրինակ, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի 57-րդ հոդվածի համաձայն՝ «Մասնակից պետությունները պետք է, ներքին օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայությամբ, տուժողների համար ապահովեն իրավաբանական աջակցությունից և իրավաբանական անվճար օգնությունից օգտվելու իրավունքը»:

Ընդ որում, հարկ ենք համարում նշել, որ թեև ներպետական օրենսդրությունը, մասնավորապես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը որոշա-

Մտաբերեք հնարավոր լուծումները և ծանոթացեք տարածաշրջանային կարգավորումներին:

կիրեն նախատեսում է անվճար իրավաբանական օգնության տրամադրման ընթացակարգեր, սակայն, այդպիսիք չեն նախատեսում խոցելի կարգավիճակով պայմանավորված՝ կոնկրետ կատեգորիայի տուժողների համար պարտադիր անվճար իրավաբանական օգնության տրամադրման մեխանիզմներ:

Գործնականում առաջացող հաջորդ խնդիրներից մեկը ենթադրյալ հանցանք կատարած անձի՝ իր դեմ ցուցմունք տվող տուժողին հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի ապահովումն է կրկնակի վիկտիմիզացիան բացառելու համատեքստում: Այս առնչությամբ հնարավոր դատավարական լուծումները պահանջում են մեղադրյալի (ամբաստանյալի) և խոցելի տուժողի համապատասխան իրավունքների հավասարակշռված իրացման մեխանիզմների ներդրում: Խնդիրն առավել սրվում է, երբ գործ ունենք անչափահաս տուժողի հետ: Այլ կերպ՝ օրենսդրական համապատասխան կարգավորումները և գործնականում դրանց իրացումը պետք է բացառի երկրորդային զոհականացումը:

Այսպես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (այսուհետ՝ նաև Կոմիտե)՝ 1985 թ.-ի հունիսի 28-ի՝ «Քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժածի կարգավիճակի մասին» R(85) 11, 2006 թ.-ի հունիսի 14-ի՝ «Հանցագործության զոհերի աջակցության վերաբերյալ» R(2006)8 հանձնարարականներում առաջարկվում է ազգային մակարդակներով միջոցներ ձեռնարկել տուժողների իրավունքների պաշտպանության համար: Մասնավորապես, Կոմիտեի՝ 1985 թ.-ի հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակներն ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործադրումը հաճախ բարդացնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառնությունը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը: Ելնելով վերոշարադրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ամրացնել տուժողի վստահությունը քրեական արդարադատության համակարգի նկատմամբ՝ Կոմիտեն անդամ պետություններին հանձնարարել է վերանայել իրենց օրենսդրությունը և դա-

տական պրակտիկան քրեական արդարադատության համակարգում տուժողի դերը բարձրացնելու մի շարք ուղղություններով:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին ձեռնարկել օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ բռնության հետագա գործողություններից բոլոր տուժողներին պաշտպանելու նպատակով, ապահովելու համար, որպեսզի ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծվեն համապատասխան այնպիսի մեխանիզմներ, որոնք արդյունավետ համագործակցություն կապահովեն շահագրգիռ բոլոր գերատեսչությունների միջև, ներառյալ՝ դատական իշխանությունը, դատախազությունը, իրավապահ մարմինները Կոնվենցիայի առարկա բռնության ձևերի գոհերին և վկաներին պաշտպանություն և աջակցություն ապահովելու գործում: Ընդ որում, մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի ձեռնարկված միջոցները, ի թիվս այլնի՝

- հիմնված լինեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության գենդերային ընկալման վրա և ուշադրության կենտրոնում պահեն գոհի մարդու իրավունքներն ու անվտանգությունը,
- ուղղված լինեն կրկնակի զոհականացումից խուսափելուն,
- արտահայտեն խոցելի անձանց, այդ թվում՝ երեխաների հատուկ կարիքները և հասանելի լինեն նրանց համար (18-րդ հոդված):

Մյուս կողմից՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը սահմանող՝ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝
(...)

Մինչ հաջորդ պարբերության նյութին ծանոթանալը, մտաբերեք, թե ինչպիսի կարգավորումներ ունեն բռնության ձևերի գոհերին և վկաներին պաշտպանություն և աջակցություն ապահովելու հարցերը ՀՀ օրենսդրությամբ:

4) իր դեմ ցուցմունք փոխող անձանց հարցման ենթարկելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգտին ցուցմունք փոխող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք փոխած անձինք. (...):»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի (...) [իրավունք] հարցաքննելու իր դեմ ցուցմունք փոխող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք փոխած վկաները»:

Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի (4) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև՝ ՄԻԵԴ կամ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «Բոլոր սպացույցները, որպես կանոն, պետք է ներկայացվեն մեղադրյալի մասնակցությամբ գործի հրապարակային քննության ընթացքում՝ հակափաստարկ ունենալու հնարավորությամբ: Սակայն սա չի նշանակում, որ որպեսզի վկաների ցուցմունքներն օգտագործվեն իբրև սպացույց, դրանք անպայման պետք է փրված լինեն միայն հրապարակային դատաքննության ընթացքում: Եստիաքննության ընթացքում փրված անան ցուցմունքներն իբրև սպացույց դիտարկելի ինքնին չի հակասում 6-րդ հոդվածի 1-ին կետին և 3-րդ կետի (դ) կետին, եթե երաշխավորվել են պաշտպանական կողմի իրավունքները: Որպես կանոն, այս իրավունքների իրականացումը պահանջում է, որ մեղադրյալին համարժեք և պարզաձև հնարավորություն տրվի վիճարկելու և հարցաքննելու իր դեմ ցուցմունք փոխող վկային, ինչպես ցուցմունք փոխող պահին, այնպես էլ գործի քննության հետագա փուլերում (տե՛ս *Delta v. France*, 1990թ.-ի դեկտեմբերի 19, § ա6, Սերիա Ա, թիվ 191-Ա)»:

Հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի՝ ՀՀ սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված՝ հակընդդեմ հարցման իրավունքն արդար դա-

տաքննության հիմնարար իրավունքի կարևորագույն տարրերից է, որն ուղղված է նաև պաշտպանության կարևորագույն իրավունքի ապահովմանը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, *Աշուր Ղուլյանի* (5) գործով որոշման մեջ անդրադառնալով անձի այս կարևորագույն իրավունքին, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքը հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի արդար դատաքննության իրավունքի առանցքային բաղադրիչներից մեկն է: Այն երաշխավորում է մեղադրյալի դեմ ցուցմունք տրվող անձանց խաչաձև հարցաքննությունը, որպիսի պայմաններում մեղադրյալը հնարավորություն է ունենում հրապարակային դատաքննության ընթացքում անմիջականորեն լսելու իր դեմ տրվող ցուցմունքը և այդ կապակցությամբ ուղղելու հարցեր ու սրանսալու պատասխաններ: Այլ կերպ, հակընդդեմ հարցման իրավունքը քրեական վարույթի արդարացիության ապահովման հիմնարար երաշխիքներից է, որի կենսագործման միջոցով հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը գործի դատական քննության ընթացքում կարողանում է վիճարկել իր դեմ տրված ցուցմունքը: Այդ գործընթացն առանցքային նշանակություն ունի նաև գործն ըստ էության քննության առնող դատարանի համար, որը ենթադրյալ հանցանք կատարած անձի մեղավորությունը որոշելիս համակողմանի գնահատման է ենթարկում ինչպես վկայի տրված ցուցմունքը, այնպես էլ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի կողմից վկային ուղղված հարցերի առնչությամբ վերջինիս տրված պատասխանները»:

Թեև ընդհանուր կանոնը վկայի՝ դատաքննության ներկայանալու և կողմերի մասնակցությամբ դատարանում անմիջականորեն ցուցմունք տալու պահանջն է, այնուամենայնիվ, ինչպես իրավաչափորեն նախատեսում է քրեադատավարական օրենքը, կարող են առկա լինել վկայի՝ դատարան չներկայանալու հարգելի պատճառներ, որոնք կբացառեն վերջինիս կողմից իր դատավարական պարտականությունները կատարելու հնարավորությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն *Աշուր Ղուլյանի* գործով վերը հիշատակված որոշման մեջ վկայակոչել է ՄԻԵԴ մշակված հետևյալ սկզբունքները վկաների նախաքննական ցուցմունքների օգտագործման հնարավորությունը գնահատելու համար.

«- վկայի չներկայանալու համար պետք է առկա լինի հիմնավոր պատճառ, այսինքն՝ դատարանը պետք է ունենա հիմնավոր փաստական և իրավական հիմքեր՝ դատական քննությանը վկայի ներկայությունն ապահովել չկարողանալու համար: Կան մի շարք պատճառներ, թե ինչու վկան չի կարող մասնակցել դատական քննությանը, օրինակ՝ վկայի մահվան, վրեժխնդրության վախի, վկային հայրնաբերելու անհնարինության կամ այլ պատճառներով: Ընդ որում, այս սկզբունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծում է, որ նույնիսկ եթե ենթադրվի, որ դատական նիստի ժամանակ վկաներին չհարցաքննելու համար չեն եղել հիմնավոր պատճառներ, սպա դրանց բացակայությունն ինքնին չի կարող վկայել քրեական վարույթի անարդարացիության մասին,

- եթե անձին մեղավոր ճանաչելու հիմքում բացառապես կամ հիմնականում դրվել են այն անձի ցուցմունքները, որին մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու կամ որը հարցաքննության չի ենթարկվել նախնական քննության կամ դատաքննության ընթացքում, սպա պաշտպանության կողմի իրավունքները կարող են սահմանափակվել այնքան, որ դա անհամարեղելի կլինի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների հետ (այսպես կոչված՝ «միակ կամ վճռորոշ կանոն»): Այդ համարեքսարում որպես «միակ» պետք է հասկանալ մեղադրյալի դատապարտման հիմքում դրված միակ ցուցմունքը, իսկ «վճռորոշ»-ը պետք է հասկանալ այնպիսի նշանակության կամ կարևորության ցուցմունքը, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար,

- պետք է ուսումնասիրվի հակակշռող բավարար գործոնների առկայությունը, ինչպես օրինակ՝ մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների առկայությունը և դատաքննության ժամանակ վկաներին ուղղակիորեն խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հակակշռելու համար ձեռնարկված դատավարական միջոցները: Ընդ որում, այդ գործոնների առկայությունը պետք է ուսումնասիրվի ոչ միայն այն գործերում, որոնցում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է հանդիսացել անձին դատապարտելու համար, այլ նաև այն գործերում, որոնցում դատարանը չի կարողացել հարակ պարզել՝ արդյոք ինդրոն առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, հա-

մոզվել է, որ այն կարևոր նշանակություն է ունեցել, և այն որպես սպացույց ճանաչելը, հնարավոր է սահմանափակել է պաշտպանության կողմի միջոցները» (6):

Այսպիսով, թեև ներպետական օրենսդրությանը նախատեսված է վկայի՝ բացառիկ դեպքերում դատարան չներկայանալու պարագայում վերջինիս՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքների հրապարակման հնարավորություն, սակայն այս կանոնը խիստ ընդհանուր է ձևակերպված: Դրա մեկնաբանության և կիրառության հետ կապված, այսպես կոչված, իրավաչափության պայմանները, ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հաշվառմամբ, հստակեցրել է ՀՀ վճարելի դատարանը:

Ուշադրություն դարձրեք վկայի ցուցմունքներին վերաբերող այս կարևոր կանոնին:

Նույն որոշման մեջ Վճարելի դատարանն անդրադարձել է նաև նշված իրավունքից հրաժարվելու իրավաչափության պայմաններին՝ նշելով, որ. «(...) Մարդու իրավունքների եվրոպական դադարանի իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից օգտվելը մեղադրյալի իրավունքն է, ով կարող է նաև իր դրսևորած վարքագծով հրաժարվել դրանցից: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դադարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի ո՛չ բառացի և ո՛չ էլ իմաստային մեկնաբանությունը չեն արգելում անձին արդար դատաքննության երաշխիքներից իր ազատ կամքով, կամ բացահայտ, կամ ենթադրաբար հրաժարվելը: Այնուամենայնիվ, այդպիսի հրաժարումը, եթե այն արդյունավետ է Եվրոպական կոնվենցիայի նպատակների համար, պետք է հաստատվի միանշանակ կերպով և ապահովվի նվազագույն երաշխիքներով, ըստ կարևորության: Ի հավելումս, այն չպետք է հակասի որևէ կարևոր հանրային շահի» (7):

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատի, թե արդյոք ապահովվել է արդարացի հավասարակշռությունն անձի անձնական անձեռնմխելիության և պաշտպանության իրավունքի

Ծանոթացեք ՄԻԵԴ-ի պրակտիկային:

միջև: ՄԻԵԴ-ն իրավաչափ է համարել քննարկվող իրավիճակներում քրեական գործով տուժողի պաշտպանության նպատակով հատուկ միջոցառումներ ձեռնարկելը՝ պայմանով, որ այդպիսիք համաձայնեցվելու են պաշտպանության կողմի իրավունքների արդյունավետ և պատշաճ իրականացման հետ: ՄԻԵԴ-ը, մի կողմից՝ ընդգծում է արդար դատաքննության իրավունքի համատեքստում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի՝ հակընդդեմ հարցման իրավունքը, մյուս կողմից՝ ընդունում է, որ նշված իրավունքը բացարձակ չէ՝ ի նկատի ունենալով այն իրավիճակները, երբ սեռական բռնության զոհի և ենթադրյալ հանցանք կատարած անձի առերեսումը կարող է հանգեցնել բռնության զոհի հետագա տրավմատիզացիային: Ուստի, ՄԻԵԴ գնահատմամբ՝ հանցանք կատարած անձի կողմից տուժողին անձնապես հարցման ենթարկելու հարցը պետք է մանրամասն քննարկման առարկա դառնա ներպետական դատարանների կողմից, հատկապես եթե խոսքը վերաբերում է նեղ անձնական հարցերին: Մասնավորապես, *Y. v. Slovenia* գործով ՄԻԵԴ-ը, հաշվի առնելով, որ սեռական բռնության վերաբերյալ կոնկրետ գործով տուժողի ցուցմունքը միակ ուղղակի ապացույցն էր, գտել էր, որ արդար դատաքննության շահը պահանջում էր վերջինիս հետ առերես հարցաքննությունը: Այնումենայնիվ, գնահատելով ինքնին առերես հարցաքննության իրականացման եղանակը՝ ՄԻԵԴ-ն արձանագրել էր Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԴ-ի գնահատմամբ՝ թեև պաշտպանության կողմը որոշակի ազատություն ունի վկայի վստահելիությունը վիճարկելու հարցում, սակայն առերես հարցաքննությունը չպետք է լինի վկային ճնշելու կամ նվաստացնելու միջոց: Եվրոպական դատարանը գտել էր, որ կոնկրետ դեպքում ներպետական դատարանը պատշաճ չէր արձագանքել հարցաքննության ընթացքում ամբաստանյալի հարցերի և մեկնաբանությունների մեջ առկա վիրավորական ենթադրություններին, որոնք գերազանցել են արդյունավետ պաշտպանության համատեքստում թույլատրելիի սահմանները: Եվրոպական դատարանն ընդգծել էր նաև այն հանգամանքը, որ պետության կողմից հրավիրված փորձագետը ևս մեղադրական բնույթի հարցեր և ձևակերպումներ էր տվել իր եզրակացության մեջ, ինչը դուրս էր իր իրավասության շրջանակից: Եվ չնայած այն հանգաման-

քին, որ կոնկրետ գործով իրավասու մարմինները ձեռնարկել էին որոշակի միջոցառումներ տուժողի հետագա տրավմատիզացիան կանխելու համար, մասնավորապես, դոնփակ դատական նիստի անցկացումը, ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելը, այդուհանդերձ, Եվրոպական դատարանն այդպիսիք բավարար չէր համարել՝ վերոնշյալ գործոնները գնահատելով սեռական բռնության զոհ դառնալու պահին տուժողի տարիքի, ինչպես նաև հարցի զգայուն բնույթի հետ համակցության մեջ (8):

Սեռական հանցագործության զոհ անչափահասին դատարանում առերես (դեմ առ դեմ) հարցաքննելու հարցին անդրադարձել է ԱՄՆ գերագույն դատարանը: Այսպես, 1988թ.-ին Կայն ընդդեմ Այովայի գործով Գերագույն դատարանը գտել է, որ խախտվել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքը, քանի որ սեռական հանցագործության երկու զոհերը հարցաքննվել են միակողմանի տեսակապի միջոցով՝ պաշտպանիչ էկրանի հետևում, որի պայմաններում երեխաները չեն տեսել մեղադրյալին, իսկ մեղադրյալը ոչ պարզ տեսանելի պայմաններում է հետևել հարցաքննությանը: Մեղադրյալը բողոքարկել է, որ պաշտպանիչ էկրանի կիրառմամբ երեխաների հարցաքննությամբ խախտվել է դեմ առ դեմ հակընդդեմ հարցման իրավունքը: ԱՄՆ գերագույն դատարանը նշված գործով հաստատել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի խախտում և սահմանել, որ հակընդդեմ հարցումը պետք է իրականացվի դեմ առ դեմ: Սակայն, երկու տարի անց ԱՄՆ գերագույն դատարանը մեկ այլ գործով վերը նշված ընդհանուր կանոնից սահմանել է բացառություն: ԱՄՆ գերագույն դատարանն ուժի մեջ է թողել Մերիլենդ նահանգի օրենսդրական կարգավորումը, որի համաձայն՝ դատավորը հնարավորություն ունի երեխայի հարցաքննությունն իրականացնել միակողմանի տեսակապի միջոցով: Այս դեպքում երեխան, դատախազը և մեղադրյալի փաստաբանը գտնվել են առանձին սենյակում, իսկ դատավորը, երդվյալ ատենակալները և մեղադրյալը՝ դատական նիստերի դահլիճում: Երեխան ուղղակի և առերես հարցաքննության է ենթարկվում առանձին սենյակում, իսկ դատական նիստերի դահլիճում գտնվող դատավարության մասնակիցները հարցաքննությանը հետևել են տեսակապի միջոցով (9):

Այս առումով հարկ է նշել, որ անչափահաս տուժողի կրկնակի վիկտիմիզացիայի բացառմանն ուղղված դատավարական մեխանիզմներ են «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-300-Ն օրենքով վերջինիս հարցաքննության առնչությամբ տրված այնպիսի նոր լուծումները, ինչպիսիք են՝

- ի թիվս այլնի, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների, ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ գործերով տուժողի հարցաքննությունը հոգեբանի միջոցով (207-րդ հոդվածի 6-րդ մասի 1-2-րդ կետեր),
- վերոնշյալ դեպքերում տուժողի հարցաքննության տեսաձայնագրման պարտադիր լինելը, ինչպես նաև առերեսման՝ միջնորդավորված՝ տեսաձայնագրառման և տեխնիկական այլ միջոցների¹ օգնությամբ իրականացնելու պահանջը (216-րդ հոդվածի 5.1-րդ մաս),
- անչափահաս վկային կամ անչափահաս տուժողին դատարանում հարցաքննելը, եթե նրա հարցաքննությունը չի տեսաձայնագրառվել նախնական քննության ընթացքում (341-րդ հոդված):

Այս առնչությամբ հարկ ենք համարում անդրադառնալ նաև ՀՀ գործող և նոր քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված պաշտպանության միջոցներին: Նախ հարկ է նշել, որ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի 56-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Կանանց նկատմամբ բռնության կամ ընտանեկան բռնության տուժող կամ վկա երեխաներին, համապարասիան դեպքերում, պետք է տրամադրվեն պաշտպանության հարուկ միջոցներ, որոնք հաշվի կառնեն երեխայի լավագույն շահերը»:*

Այսպես, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի *«Քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տրվող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշա-*

.....

1. Խոսքը վերաբերում է շղարշի, պաշտպանիչ էկրանի, թաղանթի կիրառմանը:

նակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վրանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք»:

Ինչ վերաբերում է ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 98.1-րդ հոդվածով նախատեսված՝ բուն պաշտպանության միջոցներին, ապա քննարկվող խնդրի համատեքստում կիրառելի կարող են լինել պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը, պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը, պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը, պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը, պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը, դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը, դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման²: Վերոնշյալ պաշտպանական միջոցների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք զուտ դատավարական բնույթ են կրում (օրինակ՝ դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը), իսկ մեկ այլ դեպքում՝ դրանք արտադատավարական բնույթ են կրում և դրանց կիրառությունը քրեական վարույթն իրականացնող մարմինն ինքն ապահովել չի կարող:

-
2. ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքը նախատեսում է նաև պաշտպանության այնպիսի միջոց, ինչպիսին վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելն է, որի՝ որպես զուտ պաշտպանության միջոցի կիրառումը, կարծում ենք, խիստ խնդրահարույց է անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ապահովման համատեքստում քրեադատավարական կարգի պահպանման տեսանկյունից:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական վարույթին ներգրավված անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի (սույն գլխում այսուհետք՝ պաշտպանվող անձ) նկատմամբ հարուկ պաշտպանության միջոց է կիրառվում, եթե վարույթի իրականացման հետ կապված նրանց կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին ողջամրորեն կարող է սպառնալ իրական վրանգ»:

Իսկ նույն օրենսգրքի 74-րդ հոդվածը նախատեսում է պաշտպանության հետևյալ միջոցները՝

- 1 պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը,
- 2 պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը,
- 3 պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողությունը,
- 4 պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցի տրամադրումը,
- 5 պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրումը,
- 6 պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը,
- 7 պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը,
- 8 դատական նիստերի դահլիճից հեռացումը կամ դռնփակ դատական նիստի անցկացումը,
- 9 դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով:


Մտապահեք
դատավարական այս կարևոր պահանջը և հետագայում կիրառեք այն Ձեր գործունեության ընթացքում:

Հաջորդ կարևորագույն դատավարական մեխանիզմը քննարկվող գործերով ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջն է: Եվրոպական դատարանը հատկապես ընդգծել է սեռական և ընտանիքում բռնության դեպքերով գործի հնարավորինս սեղմ ժամկետներում քննության անհրաժեշտությունը՝ որպես տուժողի շահերի պաշտպանության միջոց (10):

Եվրոպայի խորհրդի՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան ևս

պարտավորեցնում է մասնակից պետություններին ձեռնարկել օրենսդրական և այլ քննարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի իրավապահ իրավասու մարմինները կոնվենցիայի առարկա բռնության բոլոր ձևերին արձագանքեն անհապաղ և պատշաճ կերպով՝ տուժողների համար ապահովելով համարժեք և անհետաձգելի պաշտպանություն (50-րդ հոդվածի 1-ին մաս): Վերոնշյալ նորմի վերլուծությունից բխում է, որ բռնության քննարկվող տեսակներին արագ արձագանքելու և անհապաղ քննելու պահանջը միջազգայնորեն ճանաչված կանոն է:

Ինչ վերաբերում է այս առնչությամբ ներպետական կարգավորումներին, ապա թե՛ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը և թե՛ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգիրքը ունեն ողջամիտ ժամկետում գործի քննության ընդհանուր պահանջ: Սակայն նշված օրենսդրական կարգավորումներից բխում է, որ դրանք վերաբերում են մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքի համատեքստում ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջն ապահովելու անհրաժեշտությանը: Ուշագրավ է այն հանգանանքը, որ ինչպես արդեն նշվել է, Եվրոպական դատարանը հնարավորինս սեղմ ժամկետներում քննության անհրաժեշտությունը կոնկրետ դեպքում դիտարկել է որպես տուժողի շահերի պաշտպանության միջոց:



- 1 The Impact of Victimization, Prepared by the Canadian Resource Centre for Victims of Crime,
<https://www.crcvc.ca/docs/victimization.pdf>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 2, 3 Ա. Ղամբարյան, Դ. Թումասյան. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար), Եր.: «Սկետչ-Սթայլ» ՍՊԸ, 2015, էջեր 95-96, հասանելի է՝
https://www.investigative.am/images/grakanutyun/Dzernark_1.pdf
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 4 ՄԻԵԴ վճիռը Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի գործով 2010 թ.-ի մարտի 16-ի վճիռ, գանգատ թիվ 2508ա/05, կետ 42,
<http://www.irtek.am/views/act.aspx?aid=63730>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 5, 6, 7 Աշոտ Ղուլյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2018 թ.-ի նոյեմբերի 15-ի թիվ ՏԴ2/0037/01/15 որոշման 17-րդ կետ,
http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=32369622321733881
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

- 8 Եվրոպական դատարանի՝ Y. v. Slovenia գործով 2015 թ.-ի մայիսի 28-ի վճիռ, գանգատ թիվ 41107/10, 101-116-րդ կետեր, [https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22display%22:\[2\],%22itemid%22:\[%22002-10546%22\]%7D](https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22display%22:[2],%22itemid%22:[%22002-10546%22]%7D)
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 9 Jessica Smith, Remote Testimony and Related Procedures Impacting a Criminal Defendant’s Confrontation Rights. Administration of Justice Bulletin. N. 2013/02, մեջբերումն ըստ՝ http://www.parliament.am/draft_docs7/P-362_himnavorum.pdf
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 10 Եվրոպական դատարանի՝ P.M. v. Bulgaria գործով 2012 թ.-ի հունվարի 24-ի վճիռը, գանգատ թիվ 49669/07, <https://projects.iq.harvard.edu/violenceagainstwomen/publications/case-ofpm-bulgaria>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.),
M.A. v. Slovenia գործով 2015 թ.-ի հունվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 3400/07, <http://webcache.googleusercontent.com/search?q=cache:iIWC8sFVXy0J:hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/%3Flibrary%3DECHR%26id%3D001-111849%26filename%3D001-111849.pdf+%&cd=2&hl=ru&ct=clnk&gl=am>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.),
N.D. v. Slovenia գործով 2015 թ.-ի հունվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 16605/09, <https://www.sistersforchange.org.uk/wp-content/uploads/2019/03/50-ND-v-Slovenia.pdf>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

ԲԱՌԱՐԱՆ



Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 10 րոպե:

ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏ — Սեռական և ընտանիքում բռնության դեպքերով գործի՝ հնարավորինս սեղմ ժամկետներում քննության պահանջն է՝ տուժողների համար համարժեք և անհետաձգելի պաշտպանություն ապահովելու համար:

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԶՈՀԱԿԱՆԱՑՈՒՄ — Հանցագործության ուղղակի հետևանք չհանդիսացող զոհականացումն է, որը պայմանավորված է տուժողի հետ աշխատող մարմինների և կառույցների ներկայացուցիչների կողմից տուժողի նկատմամբ ցուցաբերված՝ երեխաների նկատմամբ ոչ զգայուն մոտեցմամբ:

ՀԱԿԱԿՇՈՂ ԲԱՎԱՐԱՐ ԳՈՐԾՈՆՆԵՐ — Հակընդդեմ հարցման իրավունքի բացակայությունը հակակշռելու համար ձեռնարկված դատավարական միջոցներն են:

ՀԱԿԸՆԴԴԵՄ ՀԱՐՑՄԱՆ (ԿՈՆՖՐՈՆՏԱՑԻԱՅԻ) ԻՐԱՎՈՒՆՔ — Իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունքն է:

ԿՐԿՆԱԿԻ ԶՈՀԱԿԱՆԱՑՈՒՄ (ՎԻԿՏԻՄԻԶԱՑԻԱ) — Բացասական հետևանքների ամբողջություն է, որը սեռական կամ ընտանիքում բռնության զոհը կրում է քրեական արդարադատության համակարգի հետ շփումներում:

ՄԻԱԿ ԿԱՄ ՎՃՌՈՐՈՇ ՑՈՒՑՄՈՒՆՔԻ ՄԿՁԲՈՒՆՔ — Հանցանք կատարած անձի դատապարտումն է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց անձը չի կարողացել հարցաքննել դատավարության փուլերից որևէ մեկում:

ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՍ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԶՈՇԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱՐԴՅՈՒՆՎԵՏ ՊԱՅՔԱՐԻ ԴԱՏԱՎԱՐՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ